

Աշխատանքի կատարմանն աջակցել է Բրիտանական
Արևելք-Արևմուտք կենտրոնը (ԲԱԱԿ) (www.bewc.org)
*ԲԱԱԿ-ը Միացյալ Թագավորությունում գործող հասարակական
կազմակերպություն է, որը աջակցում է ԱՊՀ երկրներին իրավական
բարեփոխումների հարցում*

ԿԱԼԱՇՆԻԿՈՎՆ ԸՆԴԴԵՄ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԳՈՐԾԻ ՀԱՄԱՌՈՏ ՇԱՐԱԴՐԱՆՔ

ԸՍՏ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ
ԴԱՏԱՐԱՆԻ 2002 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 15-Ի ՎՃՌԻ

2005 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍ
«ԻՐԱՎԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
<<http://www.legalguide.am>>

«Կալաշնիկովն ընդդեմ Ռուսաստանի գործի համառոտ շարադրանքը» կազմվել է «Իրավական ուղեցույց» հասարակական կազմակերպության անդամ Արա Ղազարյանի կողմից, ով էլ լիովին պատասխանատու է դրանց բովանդակության համար:

© 2005 «Իրավական ուղեցույց» հասարակական կազմակերպություն և Բրիտանական Արևելք-Արևմուտք կենտրոն: Հեղինակային բոլոր իրավունքները պաշտպանված են:

ԳՈՐԾԻ ՈՉ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՑ ՇԱՐԱԴՐԱՆՔ

Կալաշնիկովն ընդդեմ Ռուսաստանի Դաշնության

(գանգատ թիվ. 47095/99)

15 հուլիս 2002

1.1. Փաստերի շարադրանքը

Տվյալ գործի համար առիթ է հանդիսացել Մարդու իրավունքների Եվրոպական Կոնվենցիայի 34-րդ հոդվածի համաձայն 1998թ. դեկտեմբերի 1-ին ներկայացված համ. 47095/99 դիմումը՝ ազգությամբ ռուս Վալերի Յերմիլովիչ Կալաշնիկովի (Դիմումատու) կողմից:

Դիմումատուն ծնվել է 1955 թվականին և ապրում է Մոսկվայում: Նա համարվում էր Հյուսիս-արևելյան բաժնետիրական բանկի նախագահը: 1995թ. փետրվարի 8-ին ֆինանսական խարդախության մեջ ներգրավված լինելու կասկածանքով նրա դեմ հարուցվեց քրեական գործ: Սկզբում որպես խափանման միջոց ընտրվեց բնակավայրից չբացակայելու մասին որոշումը: 1995թ. փետրվարի 17-ին նրան առաջադրվեց մեղադրանք մեկ այլ ձեռնարկության ֆինանսական միջոցները վատնելու հիմքով: 1995թ. հունիսի 29-ին քննիչի հրամանով Դիմումատուի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրվեց կալանքը (*detention on remand*), քանի որ վերջինս խոչընդոտում էր քրեական գործով ճշմարտության բացահայտմանը: Մասնավորապես՝ կալանքի վերաբերյալ որոշման մեջ նշվում էր, որ դիմումատուն հրաժարվում է ներկայացնել քննության համար անհրաժեշտ որոշ բանկային փաստաթղթեր, վկաների վրա գործադրում է ճնշում և կեղծում է գործի նյութերը: Որոշման մեջ նաև հղում էր կատարվում հանցանքի ծանրության աստիճանի վրա՝ որպես կալանքի մասին որոշման հիմնավորում: 1995թ. դեկտեմբերի 4-ին դիմումատուին առաջադրվեց ևս 8 մեղադրանք՝ իր բանկային հաշվի վրա եղած գումարներով անօրինական բանկային գործողություններ կատարելու հիմքով:

1996թ. մարտի 1-ին գործի նախաքննությունն ավարտվեց և գործն ուղարկվեց Մագադանի քաղաքային դատարան: Դատարանը որոշեց գործը վերադարձնել Մագադանի շրջանային դատախազին՝ լրացուցիչ քննության: Լրացուցիչ քննությունից հետո գործը նորից վերադարձվեց նույն դատարան, որը գործի դատաքննությունը սկսեց 1996թ. նոյեմբերի 11-ին: Այս ընթացքում դիմումատուն երկու անգամ միջնորդեց Մագադանի քաղաքային դատարան՝ կալանքը մեկ այլ խափանման միջոցով փոխարինելու: Իր միջնորդությունը Դիմումատուն հիմնավորում էր մեկուսարանի վատ պայմաններով և առողջական վիճակի վատթարացմամբ: Երկու միջնորդություններն էլ մերժվեցին դատարանի կողմից:

1996թ. դեկտեմբերի 27-ին դիմումատուն ներկայացրեց մեկ այլ միջնորդություն՝ կալանքը այլ խափանման միջոցով փոխարինելու մասին՝ այս անգամ նույնպես որպես պատճառ նշելով առողջական վատ վիճակը և մեկուսարանի վատ պայմանները: Դատարանը մերժեց միջնորդությունը՝ հաշվի առնելով հանցանքի լրջության աստիճանը և հավանականությունը, քանի որ

լինելով ազատության մեջ՝ դիմումատուն կարող էր խոչընդոտել ճշմարտության բացահայտմանը:

Մագադանի քաղաքային դատարանում գործի քննությունը շարունակվեց մինչև 1997թ. ապրիլի 23-ը: Մեկ ամիս անց գործի քննությունը դադարեցվեց այն պատճառով, որ նախագահող դատավորը հեռացվեց իր պաշտոնից՝ տվյալ գործի հետ կապ չունեցող այլ հանգամանքներով: Հունիսին Դիմումատուն նորից միջնորդություն ներկայացրեց կալանքը խափանման այլ միջոցով փոխարինելու մասին՝ հղում կատարելով կալանավարի ծանր պայմաններին: Հուլիսին նշանակվեց նոր դատավոր, որը լուծմանը նշանակեց օգոստոսի 8-ին, սակայն դատը հետաձգվեց՝ Դիմումատուի դատին չներկայանալու պատճառով: Միաժամանակ, դատարանը նույն հիմքով նորից մերժեց դիմումատուի կալանքը փոխարինելու վերաբերյալ միջնորդությունը: Նման մեկ այլ միջնորդություն Դիմումատուն ներկայացրեց մեկ ամիս անց, որը նույնպես մերժվեց միևնույն պատճառաբանությամբ:

Նույն թվի հոկտեմբեր ամսին Դիմումատուն գանգատվեց Մագադանի շրջանային դատարան՝ խնդրելով իր գործը քաղաքային դատարանից տեղափոխել շրջանային դատարան: Նա գանգատ ուղարկեց նաև Ռուսաստանի Դաշնության Գերագույն դատարան, որը գանգատը փոխանցեց Մագադանի շրջանային դատարան: Շրջանային դատարանը մերժեց Դիմումատուի ընդդատությունը փոխելու վերաբերյալ խնդրանքը, ինչպես նաև հրահանգեց քաղաքային դատարանին միջոցներ ձեռնարկել դիմումատուի գործը քննելու համար: Նոյեմբեր ամսից դիմումատուն բազմաթիվ գանգատներ ուղարկեց տարբեր պետական մարմիններ, այդ թվում՝ Ռուսաստանի դաշնության նախագահի աշխատակազմ: Իր գանգատներում նա նշում էր կալանքի անտանելի պայմանների և դրա հետևանքով իր առողջական վիճակի վատթարացման մասին: 1998թ. փետրվարի 5-ին Մագադանի շրջանային դատարանի նախագահը հայտնեց Դիմումատուին, որ գործի քննությունը կվերսկսվի 1998թ. հուլիսի 1-ին: Նամակում նշվում էր, որ քննության ձգձգվելու պատճառ են հանդիսացել գործի ծավալուն լինելու հանգամանքը և դատավորների խիստ ծանրաբեռվածությունը:

1998թ. փետրվարի 23-ին Դիմումատուն դիմեց հացադուլի՝ կալանքի երկարատև ժամկետի և դատաքննություն չանցկացնելու փաստերի վրա իշխանությունների ուշադրությունը հրավիրելու նպատակով: Հացադուլը շարունակվեց մինչև մարտի 17-ը: Նույն ամսին դիմումատուն նորից դիմեց Ռուսաստանի Դաշնության նախագահի աշխատակազմ, ինչպես նաև Պետդումա՝ խնդրելով աջակցել իր գործը Մագադանի շրջանային դատարան փոխանցելու հարցում: Մարտի 3-ին Մագադանի շրջանի արդարադատության բաժինը հայտնեց, որ դատարանը ի վիճակի կլինի վերսկսել դիմողի գործի քննությունը 1998 թվականի երկրորդ կեսին: Այդ ընթացքում դիմումատուն դիմեց Ռուսաստանի Սահմանադրական դատարան՝ խնդրելով քննել Քրեական դատավարական օրենսգրքի 223-1 և 239 հոդվածների սահմանադրականության հարցը, որոնք վերաբերվում էին դատաքննությունը սկսելու ժամկետային սահմանափակումներին: Սահմանադրական դատարանը 1998թ. մարտի 10-ի նամակով հայտնեց, որ վիճարկվող հոդվածները ժամկետային ոչ մի սահմանափակում չեն սահմանում դատաքննության ընթացքում կալանքի տակ գտնվելու ժամկետների վերաբերյալ, հետևաբար նրա դիմումը քննել չեն կարող:

Դիմումատուի՝ տարբեր դատական և գործադիր մարմիններին հղած բազմաթիվ դիմում-բողոքներից հետո, ի վերջո, Մագադանի շրջանային դատարանի նախագահը 1998թ. մայիսին որոշեց գործը փոխանցել Խասինսկի շրջանային դատարան՝ քննությունը արագացնելու նպատակով: Սակայն այս դատարանին գործը փոխանցելուց երկու ամիս հետո էլ գործի դատաքննությունը դեռ չէր սկսվել: Այս հանգամանքը պատճառ հանդիսացավ, որպեսզի դիմումատուն պահանջեր գործը հետ ուղարկել Մագադանի քաղաքային դատարան: 1998թ. հուլիս-հոկտեմբեր ամիսներին դիմումատուն մի քանի անգամ դիմում-բողոքներ ուղարկեց Ղատավորների որակավորման բարձր մարմնին՝ բողոքելով Մագադանի քաղաքային դատարանի կողմից իրեն երկարատև կալանքի տակ պահելու դեմ:

1998թ. նոյեմբերի 13-ին Մագադանի քաղաքային դատարանը որոշում կայացրեց դատալսույնը նշանակել 1999թ. հունվարի 28-ին: Այդ օրը Մագադանի քաղաքային դատարանը որոշեց դիմումատուի գործն ուղարկել դատախազություն՝ լրացուցիչ քննության՝ քննչական մարմինների կողմից դատավարական նորմերի խախտումների առկայության հիմքով: Դիմումատուն բողոքարկեց այս որոշումը Մագադանի շրջանային դատարան, որը հրահանգեց քաղաքային դատարանին վերսկսել դատաքննությունը: Դատարանն ընդունեց նաև առանձին որոշում, որում նշվում էր, որ դատաքննությունը ձգձվել էր անհիմն պատճառներով, հաշվի առնելով, որ գործն առանձնապես բազմածավալ չէր: Տվյալ որոշումով շրջանային դատարանը հրահանգեց քաղաքային դատարանին մեկ ամսվա ընթացքում հայտնել, թե ինչ միջոցներ են ձեռնարկվել: Այս ընթացքում Դիմումատուն երկու անգամ միջնորդություն ներկայացրեց քաղաքային դատարան՝ կալանքից ազատելու և խափանման այլ միջոց ընտրելու մասին, սակայն երկու դիմումներն էլ մերժվեցին նախկինում նշված հիմքերով:

1999թ. ապրիլի 15-ին Մագադանի քաղաքային դատարանը վերսկսեց դատալսույնները: Դատաքննության ընթացքում դատախազը միջնորդեց, որպեսզի Դիմումատուն ենթարկվի հոգեբուժական փորձաքննության: Միջնորդությունը բավարարվեց: Ապրիլի 30-ի դատաքննության ժամանակ Դիմումատուն նորից միջնորդեց կալանքը այլ խափանման միջոցով փոխարինելու վերաբերյալ: Դատաքննությանը մասնակցող դատախազը դիմեց դատարանին, խնդրելով, որպեսզի դատարանը հրահանգի կալանավայրի ղեկավարությանը՝ բարելավելու Դիմումատուի կալանքի պայմանները: Դիմումատուն Դատարանին հայտնել էր, որ դատախազի միջնորդությունից հետո կալանավայրի վրա վերահսկողություն իրացնող դատախազը այցելել է մեկուսարան, ծանոթացել պայմաններին և ընդունել, որ պայմաններն իրոք վատ են, սակայն միաժամանակ հայտարարել է, որ մյուս խցերում պայմաններն էլ ավելի վատ են և որ դրանք բարելավելու համար անհրաժեշտ գումար չկա:

Նույն թվի հունիսի 8-ի դատաքննության ժամանակ դիմումատուն նորից խնդրագիր ներկայացրեց կալանքը փոխարինելու վերաբերյալ: Նա հայտնում էր, որ իր խցում, որտեղ ապրում էին 18 բանտարկյալներ, հնարավորություն չկար, որպեսզի ինքը պատշաճ կերպով պատրաստվեր դատաքննությանը: Նույն ամսի մեկ այլ դատաքննության ընթացքում դիմումատուն նորից հանդես եկավ միջնորդությամբ՝ կալանքը խափանման այլ միջոցով փոխարինելու մասին՝ հղում կատարելով կալանքի վատ պայմանների և իր առողջական վատ վիճակի վրա: Իր միջնորդության մեջ նա հայտնում էր, որ հիվանդացել է վարակիչ հիվանդությամբ, որ մաշկն ամբողջությամբ ծածկված է իր անկողնու մեջ

տարածված միջատների խայթոցներից առաջացած վերքերով, որ ստիպված է իր անկողինը կիսել երկու մյուս բանտարկյալների հետ: Նշվում էր նաև, որ խցում մշտապես տիրում է հեղձուցիչ օդ, քանի որ բոլոր բանտարկյալները ծխում էին, որ տառապում է սրտի անբավարարությամբ և որ մարմնի քաշը 96կգ-ից նվազել է մինչև 67կգ: Նա նաև հայտնել է, որ խափանման միջոցը փոխելուց հետո անկարող կլիներ միջամտել քննության ընթացքին: Մագադանի քաղաքային դատարանը որոշում կայացրեց միջնորդությունը թողնել առանց քննության, քանի որ միջնորդություններում բարձրացվել էին այնպիսի հարցեր, որոնք դուրս էին դատաքննության ընթացքում քննարկվող հարցերի շրջանակներից:

1999թ. հունիսի 22-ին Դատավորների բարձր որակավորման հանձնաժողովը աշխատանքից ազատեց Մագադանի քաղաքային դատարանի նախագահին, ինչպես նաև՝ Մագադանի շրջանային դատարանի նախագահին, նրա երկու տեղակալներին՝ դիմումատուի գործի քննության անհարկի ձգձգումների պատճառով: Հունիսի 23-ի դատաքննության ժամանակ Դիմումատուն հայտնեց, որ ինքնազգացողությունը վատ է և ինքն անկարող է մասնակցել քննությանը: Դատարանը հրահանգեց անցկացնել քժշկական քննություն՝ պարզելու, թե արդյոք կարիք կա դիմումատուին տեղափոխել հիվանդանոց: Դատաքժշկական փորձագետները պարզեցին, որ Դիմումատուն տառապում էր մի շարք հիվանդություններով: Սակայն նրանք գտան, որ հիվանդանոց տեղափոխելու անհրաժեշտություն չկար, և որ Դիմումատուն ի վիճակի էր մնալու կալանքի տակ: Նրանք նաև եզրակացրեցին, որ Դիմումատուի առողջական վիճակը թույլատրում է նրան մասնակցել դատաքննությանը և ցուցմունքներ տալ: 1999թ. հուլիսի 15-ի դատաքննության ժամանակ Դիմումատուն նորից պահանջեց իրեն ազատ արձակել՝ այն հիմքով, որ դատարանը արդեն գրեթե ավարտել էր դատաքննությունը, և որ նաև այլևս ի վիճակի չէր խոչընդոտել քննության ընթացքին: Սակայն միջնորդությունը նորից մերժվեց: Նույն օրը ընդունած մեկ այլ որոշման մեջ դատարանը նշում է, որ 1999թ. ապրիլի 15-ից մինչև հուլիսի 15-ը ընկած ժամանակահատվածում դատարանը ուսումնասիրել է դիմումատուի մոտ 30 դիմումներ՝ այդ թվում՝ այնպիսի դիմումներ, որոնց բովանդակությունը կրկնվում էր և որ դրանց վերաբերյալ նախկինում ընդունվել էին միանման որոշումներ: Որոշման մեջ նաև նշվում էր այն մասին, որ դիմումատուն հայտարարել էր, որ ինքը ցուցմունք կտար միայն այն դեպքում, եթե իր դիմումներն ընդունվեին, և որ դատարանի նման վարվելակերպը միայն նպատակ էր հետապնդում անհարկի ձգձգել գործի քննության ժամկետները: Դատարանը 29 վկաներից լսեց միայն 9-ի ցուցմունքները, որոնց հնարավոր էր դատակոչել մինչ այդ: Մնացած 12 վկաների ցուցմունքները, որոնք տրվել էին նախաքննության ընթացքում, հրապարակվեցին նաև դատաքննության ընթացքում:

1999 թվականի օգոստոսի 3-ի վճռով դատարանը հիմնավորված համարեց դիմումատուին ներկայացված մեկ մեղադրանքը և կարճեց մեղադրական եզրակացության մեջ նրա նկատմամբ առաջադրված երկու այլ մեղադրանքներ, որոնցից յուրաքանչյուրը պարունակում էր 9 հանցակազմ: Դատարանը Դիմումատուին ենթարկեց հինգ տարի և վեց ամիս ազատազրկման՝ ընդհանուր ռեժիմի ուղղիչ ճամբարում՝ ազատազրկման ժամկետը հաշվելով 1995թ. հունիսի 29-ից: Դատարանը նշեց, որ նախաքննությունը կատարվել էր թերություններով, և քննիչներն անարդարացիորեն փորձել էին մեղադրական եզրակացության մեջ ավելացնել մեղադրանքի հիմքերը: Դատարանը նաև նշեց, որ տեղի էին ունեցել

դատավարական նորմերի խախտումներ՝ անհրաժեշտ փաստաթղթերը դատարանին պատշաճ կերպով ներկայացնելիս: Այդ խախտումները անհրաժեշտ էր վերացնել դատաքննության ընթացքում, որն էլ և նպաստել էր քննության ժամկետի երկարացմանը: Նշվում էր նաև, որ քննության ընթացքի վրա վերահսկողություն իրականացնող մարմինները, այդ թվում՝ Մագադանի շրջանի դատախազությունը, թույլ էին տվել պատճառ վերահսկողության ընթացակարգերի խախտումներ: Նույն օրվա մեկ այլ որոշումով քաղաքային դատարանը որոշեց գործի մի առանձնացված մաս ուղարկել դատախազություն՝ լրացուցիչ քննության: Այս որոշումը դիմումատուի կողմից բողոքարկվեց Գերագույն դատարան, որն իր 1999թ. սեպտեմբերի 30-ի որոշումով նշված որոշումը համարեց անօրինական:

Քաղաքային դատարանի որոշումը կարելի էր բողոքարկել հրապարակումից հետո՝ յոթ օրվա ընթացքում: Սակայն Դիմումատուն չբողոքարկեց այն՝ համարելով անիմաստ, քանի որ կարծում էր, որ Մագադանի շրջանային դատարանն իր բացասական դերն էր ունեցել իրեն դատապարտելու հարցում և այդ պատճառով համարեց, որ բողոքարկումը անարդյունավետ կլինի: Այսպիսով, 1999թ. օգոստոսի 11-ին Մագադանի քաղաքային դատարանի որոշումը մտավ ուժի մեջ:

1999թ. հոկտեմբերի 25-ին Դիմումատուն դիմեց Ռուսաստանի Գերագույն դատարանի նախագահին՝ խնդրելով վերանայել քաղաքային դատարանի որոշումը, սակայն դիմումը մերժվեց: Հաջորդ ամսին Դիմումատուն նորից դիմեց նույն դատարանին՝ նույն հիմքով, որը նույնպես մերժվեց: 1999թ. սեպտեմբերի 24-ին թեև որոշվեց խափանման միջոցը փոխարինել բնակավայրից չհեռանալու մասին որոշումով, սակայն նա դեռ շարունակեց մնալ բանտարկության մեջ՝ կրելով ազատագրվման ժամկետը: 1999թ. սեպտեմբերի 29-ին մնացած մեղադրանքների վերաբերյալ վարույթը կարճվեց՝ դիմումատուի կողմից կատարված գործողությունների մեջ հանցակազմի բացակայության հիմքով: Սակայն 1999թ. սեպտեմբերի 30-ին Դիմումատուին առաջադրվեց նոր մեղադրանք՝ որպես բանկի նախագահ՝ իր տրամադրության տակ գնվող գումարները յուրացնելու հիմքով: Նույն թվի հոկտեմբեր ամսին դատախազությունն ավարտեց նախաքննությունը և գործն ուղարկեց Մագադանի քաղաքային դատարան: Մեղադրականը կրում էր գործի սկզբնական 48529 համարը և նրա մեջ նշվում էր, որ այդ գործով վարույթը հարուցվել էր 1995 թվականի փետրվարի 8-ին: Այս գործով դատաքննությունը սկսվեց նույն թվի դեկտեմբեր ամսին: 2000թ. մարտի 31-ին Մագադանի քաղաքային դատարանը որոշեց գործը կարճել՝ մեղադրանքի բացակայության հիմքով: 2000թ. մայիսի 26-ին ընդունվեց համընդհանուր համաներում, որի հիմքով էլ 2000թ. հունիսի 31-ին դիմումատուն ազատ արձակվեց:

1.2. Համապատասխան ներպետական օրենսդրությունը

Ռուսաստանի Դաշնության Սահմանադրությունը

Հոդված 6, բաժին 2

Մինչև, Ռուսաստանի Դաշնության քրեական-դատավարական օրենսդրության տվյալ Սահմանադրության դրույթներին

համապատասխանեցնելը, պետք է կիրառվեն հանցագործություն կատարելու մեջ կասկածվող անձին ձերբակալության կամ կալանքի ենթարկելու համար սահմանված նախկին ընթացակարգերը:

Հոդված 89 (1)
Խափանման միջոցների կիրառումը

Երբ բավարար հիմքեր կան կարծելու, որ մեղադրվող անձը կարող է խուսափել հետաքննությունից, նախաքննությունից կամ դատաքննությունից կամ կխոչընդոտի քրեական գործի ճշմարտության բացահայտմանը կամ կներգրավվի քրեական գործողություններում, ինչպես նաև որպեսզի ապահովվի դատավճռի ի կատար ածումը, հետաքննությունը, նախաքննությունը վարող անձը, դատախազը և դատարանը կարող են կիրառել հետևյալ խափանման միջոցները մեղադրվողի նկատմամբ՝ ստորագրություն նշված վայրից չհեռանալու մասին, անձնական երաշխավորությունը կամ երաշխավորություն հանրային կազմակերպության կողմից, կամ կալանքը

Հոդված 97
Մինչդատական վարույթում կալանքի
ժամկետային սահմանափակումները

Քրեական գործերով հանցագործությունների մինչդատական վարույթի ընթացքում կալանքի ժամկետը չի կարող լինել ավելին, քան երկու ամիս: Այս ժամկետային սահմանափակումը կարող է երկարացվել մինչև երեք ամիս՝ շրջանային կամ քաղաքային դատախազի կողմից...եթե հնարավոր չէ ավարտել քննությունը, և չկա որևէ հիմք խափանման միջոցը փոխելու համար: Կալանքի հետագա երկարացումը մինչև վեց ամիս, արգելանքի վերցնելու պահից, կարելի է կատարել միայն Ռուսաստանի դաշնության իրավասու դատախազի կողմից՝ այն դեպքերում, եթե գործը առանձնահատուկ ծավալի է:

Նման կալանքի՝ վեց ամսից ավել ժամկետի երկարացումը կարող է թույլատրվել միայն առանձնահատուկ դեպքերում և բացառապես այն անձանց նկատմամբ, որոնք մեղադրվում են ծանր կամ առանձնապես ծանր քրեական հանցանք կատարելու մեջ: Նման երկարացումը կարող է թույլատրվել միայն Ռուսաստանի Դաշնության գլխավոր դատախազի տեղակալի կողմից (մինչև մեկ տարի), կամ Ռուսաստանի դաշնության Գլխավոր դատախազի կողմից (մինչև 18 ամիս):

Ժամկետային սահմանափակման հավելյալ երկարացումներ չեն կարող թույլատրվել, և կալանքի տակ գտնվող մեղադրյալը պետք է անմիջապես ազատ արձակվի:

1.3. Ռուսաստանի դաշնության վերապահումը

91. Կոնվենցիան վավերացնելու մասին Ռուսաստանի Դաշնության իրավական փաստաթուղթը, որն ի պահ է տրվել 1998թ. մայիսի 5-ին, պարունակում է հետևյալ վերապահումը:

“Կոնվենցիայի 64-րդ հոդվածի համաձայն Ռուսաստանի Դաշնությունը հայտարարում է, որ 5(3) հոդվածի դրույթները չպետք է արգելք հանդիսանան...որպեսզի ձերբակալության ենթարկելու ընթացակարգը, կալանքը և բանտարկությունը ըստ 1993թ. Սահմանադրության երկրորդ բաժնի 6-րդ կետի երկրորդ ենթակետի, ժամանակավորապես կիրառվի այնպիսի անձանց նկատմամբ, որոնք կասկածվում են քրեական հանցանք կատարելու մեջ՝ 1960թ. հոկտեմբերի 27-ին ընդունված ՌՍՖՍՀ Քրեական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդվածի առաջին կետի, 89-րդ հոդվածի առաջին կետի, հոդվածներ 90, 92, 96, 96-1, 96-2, 101 և 122 հիմքերով:

1.4. Կոնվենցիայի 3-րդ հոդվածի ենթադրյալ խախտման մասին

92. Դիմումատուն գանգատվում էր Մազադանի IZ-47/1 կալանավայրի մեկուսարանի պայմաններից. Նա վիճարկում էր Կոնվենցիայի 3 –րդ հոդվածը, որը նշում է.

«Ոչ ոքի չի կարելի ենթարկել խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի»

Դիմումատուն մասնավորապես նշում էր խցի հակասանիտարական վիճակի, խցում գտնվող կալանավորների մեծ քանակի, ինչպես նաև կալանքի երկար ժամկետի մասին, որը նա կրել է նման պայմաններում, ինչը բացասական հետևանք է թողել իր առողջական վիճակի վրա և նվաստացումների ու տառապանքների պատճառ է հանդիսացել:

93. Կառավարությունը պնդում էր, որ դիմումատուի կալանքի պայմանները չէին կարող բնորոշվել որպես խոշտանգում, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք: Նրա կալանքի պայմանները չէին տարբերվում կամ, ծայրահեղ դեպքում, ավելի վատթար չէին, քան Ռուսաստանի կալանավորների մեծ մասինը: Խցում կալանավորների մեծ թիվը, ընդհանուր առմամբ, մինչդեռ տակալ կարողություն կալանքի խնդրահարույց հարց է հանդիսանում: Իշխանությունները ոչ մի նպատակ չէին հետապնդում Դիմումատուին ենթարկել ֆիզիկական տառապանքների կամ վնասել նրա առողջությանը: Կալանավայրի ղեկավարությունը բոլոր հնարավոր միջոցները օգտագործել էր, որպեսզի բժշկական խնամք ցուցաբերվեր հիվանդ կալանավորներին և հիվանդությունը չտարածվեր այլ անձանց:

94. Հայտնի էր, որ տնտեսական պատճառներից ելնելով՝ Ռուսաստանում կալանքի պայմանները գտնվում էին շատ անբավարար վիճակում և դրանք չէին բավարարում ուղղիչ հաստատությունների համար սահմանված պահանջներին՝ Եվրոպայի խորհրդի այլ երկրներում նույնպես: Սակայն Կառավարությունը հնարավորության սահմաններում անում էր ամեն ինչ կալանքի պայմանները բարելավելու ուղղությամբ: Նրանք ընդունել են մի շարք ծրագրեր՝ նոր մինչդատական վարույթի մեկուսարաններ կառուցելու, գոյություն ունեցողները վերակառուցելու և բանտերում տուբերկուլյոզը և այլ հիվանդությունները վերացնելու ուղղությամբ: Այս ծրագրերի իրականացումը թույլ կտա երկու անգամ մեծացնել բանտարկյալների համար նախատեսված տարածքը և բարելավել մինչդատական վարույթի մեկուսարանների սանիտարական պայմանները:

95. Դատարանը հիշեցնում է, որ Կոնվենցիայի 3-րդ հոդվածը ամրագրում է ժողովրդավարական հասարակության ամենահիմնարար արժեքներից մեկը: Այն բացարձակ կերպով արգելում է խոշտանգումը, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքը՝ անկախ հանգամանքներից և դիմումատուի վարվելակերպից (տես, օրինակ, *Լաբիտան ընդդեմ իտալիայի*, համ. 26772/95, կետ 199, ՄԻԵԴ 2000-IV):

Դատարանը նաև հիշեցնում է, որ համաձայն իր նախադեպերի, վատ վերաբերմունքը պետք է հասնի դատարանի նվազագույն աստիճանի, որպեսզի ընկնի 3-րդ հոդվածի կիրառության տակ: Նվազագույն աստիճանի գնահատումը հարաբերական է, այն կախված է գործի բոլոր հանգամանքներից, ինչպես օրինակ՝ վերաբերմունքի ժամանակահատվածը, դրա ֆիզիկական և մտավոր ազդեցությունը, որոշ դեպքերում նաև, սեռը, տարիքը և զոհի առողջական վիճակը (տես. այլ վճիռների թվում նաև Իռլանդիան ընդդեմ Միացյալ Թագավորության գործով դատավճիռը, 1978թ. հունվարի 18, շարք Ա, համ. 25, էջ 65, կետ 162):

Դատարանը համարել է, որ վերաբերմունքը «անմարդկային» է, եթե, *inter alia*, այն կանխամտածված է, կիրառվել է մի քանի ժամ անընդհատ և հարուցել է կամ ակնհայտ մարմնական վնասվածք կամ ուժեղ ֆիզիկական կամ մտավոր տառապանք: Վերաբերմունքը համարվել է «արժանապատվությունը նվաստացնող», եթե այն, որպես այդպիսին, զոհի մոտ առաջանցում է վախի, տառապանքի կամ ստորադասության զգացում, որը կարող է նվաստացնել կամ ստորացնել նրան (տես, օրինակ, *Կուդլան ընդդեմ Լեհաստանի*, համ. 30210/96, կետ 92, ՄԻԵԴ 2000-XI): Որոշելու համար, թե արդյոք որոշակի վերաբերմունքը համարվում է «արժանապատվությունը նվաստացնող» 3-րդ հոդվածի իմաստի շրջանակներում, Դատարանը հաշվի է առնելու, թե արդյոք դա նպատակ էր հետապնդում նվաստացնել և ստորացնել տվյալ անձնավորությանը և արդյոք, հանգամանքներից ելնելով, այն բացասական ազդեցություն է ունեցել անձի վրա այնպիսի կերպով, որն անընդունելի է 3-րդ հոդվածի համար (տես, օրինակ, *Ռանինեն ընդդեմ Ֆինլանդիայի դատավճիռը 1997թ. դեկտեմբերի 16-ին*, Ջեկույց որոշումների և դատավճիռների մասին, 1997-VIII, էջեր 2821-22, կետ 55): Սակայն, նշված նպատակներից որևէ մեկի բացակայությունը չի կարող բացառել 3-րդ հոդվածի խախտում (տես, օրինակ, *Պիիրսն ընդդեմ Հունաստանի*, համ. 28524/95, կետ 74, ՄԻԵԴ 2001-III): Հարուցված տառապանքներն ու նվաստացումները ցանկացած դեպքում պետք է ավելին լինեն, քան տառապանքի և նվաստացման անխուսափելի տարրը, որը կապված է տվյալ տեսակի պատշաճ համարվող վերաբերմունքի կամ պատժի հետ:

Անձին ազատագրվելու համար կիրառված միջոցները կարող են երբեմն պարունակել նման տարրեր: Այդուհանդերձ, չի կարելի ասել, որ երկարաժամկետ կալանքը, որպես այդպիսին, Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խնդիր է առաջացնում: Ոչ էլ կարելի է մեկնաբանել, որ այդ հոդվածը հանգեցնում է կալանավորվածին առողջական վիճակից ելնելով ազատելու կամ նրան հատուկ բուժում տրամադրելու համար քաղաքացիական հիվանդանոց տեղավորելու ընդհանուր պարտավորության:

Այնուամենայնիվ, ըստ այս դրույթի պետությունը պետք է ապահովի, որպեսզի անձը կալանքի տակ գտնվի այնպիսի պայմաններում, որոնք համատեղելի են մարդկային արժանապատվության հետ, որպեսզի միջոցների կիրառման ձևը և մեթոդը նրան չենթարկեն այնպիսի աստիճանի անհանգստության և դժվարությունների, որոնք գերազանցում են տառապանքի անխուսափելի աստիճանը, որը ներհատուկ է կալանքին և հաշվի առնելով բանտարկության գործնական պահանջները՝ պատշաճ կերպով պահպանվի նրա առողջությունը և բարօրությունը (տես. Կուդլան ընդդեմ Լեհաստանի, որը մեջբերվեց վերևում, կետեր 92-94):

Կալանքի պայմանները գնահատելիս պետք է հաշվի առնել այդ պայմանների ընդհանուր ազդեցությունը, ինչպես նաև Դիմումատուի առանձին պնդումները (տես. Դուգոզն ընդդեմ Հունաստանի, համ. 40907/98, կետ 46, ՄԻԵԴ 2001-II):

96. Տվյալ գործով Դատարանը նշում է, որ դիմողը կալանքի տակ էր գտնվել Մագադանի IZ-47/1 կալանավայրում 1995թ. հունիսի 1-ից մինչև 1999թ. հոկտեմբերի 20-ը, և այնուհետև 1999թ. դեկտեմբերի 9-ից մինչև 2000թ. հունիսի 26-ը: Դատարանը հիշեցնում է, որ համաձայն համընդհանուր ճանաչված միջազգային նորմերի, Կոնվենցիան Պայմանավորվող երկրի համար պարտադիր նշանակություն ունի միայն այն փաստերի առնչությամբ, որոնք տեղի են ունեցել դրա ուժի մեջ մտնելուց հետո: Ռուսաստանի համար Կոնվենցիան ուժի մեջ է մտել 1998թ. մայիսի 5-ին: Սակայն, գնահատելով կալանքի պայմանների թողած հետևանքները դիմումատուի վրա, իսկ պայմանները նույնն էին բանտարկության ամբողջ ընթացքում՝ երկարաժամկետ կալանքի և դատապարտումից հետո, ապա Դատարանը կարող է հաշվի առնել նաև կալանքի տակ գտնվելու ամբողջ ժամանակահատվածը, այդ թվում՝ մինչև 1998 թվականի մայիսի 5-ը ընկած ժամանակահատվածը:

97. Դատարանը նշում է, որ այն խուցը, որտեղ կալանված էր դիմողը, ուներ 17 քառակուսի մետր տարածություն (ըստ դիմողի) և 20.8 քառակուսի մետր (ըստ Կառավարության): Խցում կային մահճակալներ և այն նախատեսված էր 8 անձի համար: Կարելի է հարցականի տակ դնել, թե արդյոք նման կահավորանքը կարող էր համարվել ընդունված չափանիշներին համապատասխան: Այս կապակցությամբ Դատարանը վերհիշում է, որ պատժի ժամանակ խոշտանգումները, անմարդկային կամ մարդկային արժանապատվությունը ստորացնող վերաբերմունքը արգելվելու վերաբերյալ Եվրոպական Կոմիտեն սահմանել է, որ 7 քառակուսի մետրը բանտարկվածի համար համարվում է մոտավոր և ցանկալի ուղեցույց կալանախցի համար (տես. 2-րդ Ընդհանուր գեկույց – CPT/Inf (92) 3, կետ 43), այլնքն. 56 քառակուսի մետր՝ 8 անձի համար:

Չնայած այն փաստին, որ խուցը նախատեսված էր 8 անձի համար, համաձայն դիմողի ներկայացրած փաստարկների, իր կալանքի ժամանակահատվածում խցում սովորաբար գտնվում էին 18-24 անձինք: Կալանքից ազատելու համար 1996թ. դեկտեմբերի 27-ին գրած իր դիմումում դիմումատուն հայտարարել էր, որ իր 8-մահճակալանոց խցում գտնվում էին 21 բանտարկյալներ: Նույն բովանդակության մեկ այլ դիմումում գրված՝ 1999թ. հունիսի 8-ին, նա նշում էր 18 բանտարկյալներ (տես. կետեր 43 և 73 վերևում):

Դատարանը նշում է, որ Կառավարությունը, իր կողմից, ընդունում էր, որ կալանավայրերի համընդհանուր կուտակվածության պատճառով խցերի յուրաքանչյուր անկողին օգտագործվում էր 2 կամ 3 անձանց կողմից: Սակայն Կառավարությունը համաձայն չէր դիմումատուի հետ՝ բանտարկյալների թվի առնչությամբ: Ըստ Կառավարության ներկայացրած դիտողությունների՝ Դիմումատուի խցում գտնվում էին 11 կամ ավելի անձինք խցում՝ նշված ժամանակահատվածի ցանկացած պահին և սովորաբար խցում բանտարկյալների թիվը կազմում էր 14: Ինչևէ, Կառավարությունը որևէ ապացույց չներկայացրեց իրենց պնդումները հիմնավորելու համար: Ըստ Դիմումատուի, միայն 2000թ. մարտ-ապրիլ ամիսներին բանտարկյալների թիվը պակասեցվեց մինչև 11:

Դատարանը անհրաժեշտ չի համարում այս հարցի շուրջ Կառավարության և դիմումատուի միջև տարաձայնությունները լուծել: Ներկայացված թվերը թույլ են տալիս եզրակացնել, որ տվյալ ժամանակահատվածի ցանկացած պահի դիմումատուի խցում յուրաքանչյուր բանտարկյալի հատկացված էր 0.9 – 1.9 քառակուսի մետր տարածք: Այսպիսով, Դատարանի կարծիքով խուցը շարունակաբար գտնվում էր չափից դուրս լցված վիճակում: Գործերի նման վիճակը ինքնստիճյան բարձրացնում էր Կոնվենցիայի 3-րդ հոդվածի հարց: Ավելին, քանի որ խուցը խիստ մարդաշատ էր, բանտարկյալները ստիպված էին քնել հերթով՝ յուրաքանչյուրը 8-ժամ քնելու հերթականությամբ: Կալանքից ազատելու մասին 1999թ. հունիսի 16-ին գրած իր դիմումից պարզվում է, որ տվյալ պահին նա իր մահճակալն օգտագործում էր երկու այլ բանտարկյալների հետ միասին (տես 74 կետը վերևում): Քնելու պայմաններն էլ ավելի էին բարդանում խցի անընդհատ լուսավորվածության պատճառով, ինչպես նաև խցի մեծ թվով բանտարկյալների ընդհանուր անցուդարձից և աղմուկից: Դրա արդյունքում քնազրկումը պետք է որ առաջացներ ֆիզիկական և հոգեբանական մեծ բեռ դիմողի համար: Դատարանը այնուհետև նկատում է խցում պատշաճ օդափոխիչ համակարգի բացակայության փաստը, որում գտնվում էին թույլատրվածից շատ բանտարկյալներ և որոնց հավանաբար թույլատրվում էր ծխել խցում: Չնայած դիմողին թույլատրված էր զբոսանք օրական մեկ կամ երկու ժամ, սակայն մնացած ժամանակը նա փակված էր խցում՝ իրեն հատկացված շատ սահմանափակ տարածքով և խցի հեղձուցիչ օդով:

98. Դատարանը այնուհետև նշում է, որ դիմողի խուցը լիքն էր մակաբույծ միջատներով և իր կալանքի ժամանակահատվածում խցում հակամիջատային ոչ մի միջոց չի կիրառվել: Կառավարությունը ընդունեց, որ կալանախցերում միջատների բազմացումը խնդրահարույց հարց է և հղում կատարեց 1989 թ. նախարարական հրամանին, որով կալանավայրերին պարտավորեցվում էր դեզինֆեկցիոն միջոցներ կիրառել: Ինչևէ, տպավորություն չի ստեղծվում, որ նման բան արվել էր դիմողի խցում:

իր կալանքի ժամանակաընթացում դիմումատուին տարել է բազմաթիվ մաշկային և սնկային հիվանդություններ, մասնավորապես՝ 1996, 1997 և 1999 թվականներին, որի արդյունքում դատավարությունները հետաձգվում էին: Թեև ճիշտ է, որ դիմողն այս հիվանդություններից բուժվելու համար բուժում ստացել է, սակայն այդ հիվանդությունների կրկնությունը արդեն թույլ է տալիս եզրակացնել, որ խցի վատ պայմանները, որոնք թույլ էին տալիս այդ հիվանդությունները կրկնվել, մնացել էին անփոփոխ:

Դատարանը մեծ մտահոգությամբ նաև նշում է, որ դիմումատուին երբեմն կալանվել էր այնպիսի անձանց հետ, որոնք տառապում էին սիֆիլիսով կամ տուբերկուլյոզով, չնայած կառավարության հավաստիացումներին, որ դրանց տարածումը կանխվել էր:

99. Վերը նկարագրված հակասանիտարական պայմանների մասին, որպես հավելյալ վկայություն, հանդիսանում են զուգարանի պայմանները: Խցի անկյունում տեղադրված զուգարանի նստատեղը 1.1 մետր բարձրությամբ բաժանող պատով բաժանված էր ոչ թե ապրելատեղի ընդհանուր տարածքից, այլ կից լվացարանից: Ջուգարանի մուտքի վրա ոչ մի վարագույր չկար: Դիմողն այսպիսով ստիպված էր զուգարանից օգտվել այլ բանտարկյալների ներկայությամբ, ինչպես նաև ստիպված էր ներկա լինել, երբ այլ բանտարկյալներ օգտվում էին զուգարանից: Կառավարության կողմից տրամադրված լուսանկրաները ցույց են տալիս աղտոտված և քայքայված վիճակում գտնվող կալանախուց, որի տարածքում գտնվող զուգարանը ոչ մի առանձնացվածության պայմաններ չի տրամադրում:

Թեև Դատարանը մեծ բավարարվածությամբ նշում է, որ Մազադանի կալանավայրերում, որտեղ կալանվել էր դիմողը, կատարվել էին մեծ փոփոխություններ (ինչպես երևում է Կառավարության կողմից Դատարանին տրամադրված տեսաերիզից), սա ոչ մի կերպ չի նվազեցնում այն պայմաններն ամբողջությամբ, որին դիմումատուին ստիպված էր դիմանալ այս ամբողջ ժամանակահատվածում:

100. Դիմումատուի կալանքի պայմանները հանդիսանում էին այս գործը քննող դատարանի մտահոգության առարկան: 1999թ. ապրիլ և հունիս ամիսներին դատարանը պահանջեց բժշկական փորձագետներին ներկայացնել իրենց կարծիքը, թե ինչ ազդեցություն կարող էր ունենալ դիմողի հոգեկան և ֆիզիկական առողջության վրա մոտ 4 տարվա կալանքը նման պայմաններում: Սա արվեց պարզելու համար՝ արդյոք դիմումատուին կարող էր մասնակցել դատաքննությանը և արդյոք կարիք կար նրան տեղավորել հիվանդանոցում (տես 71 և 76 կետերը վերևում): Չնայած փորձագետները երկու հարցերին էլ տվեցին բացասական պատասխան, սակայն Դատարանը նշում է նրանց՝ 1999թ տված եզրակացությունը, որի մեջ տված էին բոլոր հիվանդությունները, որոնցով տառապել է դիմումատուին, neurocirculatory dystonia, asthenoneurotic syndrome, chronic gastroduodenitis, a fungal infection on his feet, hands and groin and mycosis (տես. կետ 30 վերևում):

101. Դատարանն ընդունում է, որ տվյալ գործում ոչ մի նշում չկա այն մասին, որ ուղղակիորեն արտահայտված միտում կար դիմողին նվաստացնել կամ ստորացնել: Սակայն, զոհին նվաստացնելը կամ ստորացնելը՝ որպես

հետապնդվող նպատակ՝ պետք է որպես գործոն հաշվի առնել, նման որևէ նպատակի բացակայությունը չի կարող բացառել 3 հոդվածի խախտում արձանագրելը (տես. Պիիրսն ընդդեմ Հունաստանի, որից մեջբերում արվել է վերևում): Դատարանը հաշվի է առնում, որ կալանքի պայմանները, որին դիմողը ստիպված էր դիմանալ մոտ 4 տարի և 10 ամիս, պետք է որ նրան պատճառած լինեին բավականին մտավոր տառապանքներ, որոնք նվաստացնում են մարդու արժանապատվությունը և նրա մեջ առաջացնում այնպիսի զգացումներ, որոնք նվաստացնող են և ստորացնող:

102. Վերև նշվածը հաշվի առնելով՝ Դատարանը գտնում է, որ դիմողի կալանքի պայմանները, հատկապես խցի լեփ լեցուն լինելը, հակասանիտարական վիճակը և դիմողի առողջական վիճակի և բարօրության վրա դրա ունեցած բացասական ազդեցությունը, դրան ավելացրած նաև ժամկետի երկարությունը, որի ընթացքում դիմողը կալանված էր նման պայմաններում, համարվում են արժանապատվությունը ստորանցնող վերաբերմունք:

103. Ուստի, տեղի է ունեցել Կոնվենցիայի 3 հոդվածի խախտում:

1.5. Կոնվենցիայի 5(3) հոդվածի ենթադրյալ խախտման մասին

104. Դիմումատուն գանգատվում էր, որ մինչդատական կալանքի երկար ժամկետները խախտել են Կոնվենցիայի 5(3) հոդվածը, որն նշում է.

«Սույն հոդվածի 1(c) ենթակետի դրույթներին համապատասխան ձերբակալված կամ կալանավորված յուրաքանչյուր ոք անհապաղ տարվում է դատավորի կամ այլ պաշտոնատար անձի մոտ, որն օրենքով լիազորված է իրականացնելու դատական իշխանություն, և ունի ողջամիտ ժամկետում դատաքննության իրավունք կամ մինչև դատաքննությունը ազատ արձակվելու իրավունք: Ազատ արձակումը կարող է պայմանավորվել դատաքննության ներկայանալու երաշխիքներով»:

1.5.1. Կառավարության նախնական առարկությունը

105. Կառավարությունը պնդում էր, որ դիմողի գանգատը պետք է քննել Ռուսաստանի կողմից արված վերապահման լույսի ներքո: Ներկայացվում էր, որ վերապահումը տարածվում էր դիմողի և՛ նախաքննության, և՛ դատաքննության կալանքի ժամկետների վրա: Նրանք հղում էին կատարում վերապահման տեքստի վրա և տեքստի մեջ նշված Քրեա-դատավարական օրենսգրքի հոդվածի բովանդակությանը: Մասնավորապես, 11, 89, 92 և 101 հոդվածներով դատարանին իրավունք էր վերապահվում դատաքննության ընթացքում կիրառել կալանքը՝ որպես խափանման միջոց՝ մինչև դատավճռի ընդունումը:

106. Դիմումատուն ներկայացնում էր, որ Ռուսաստանի վերապահումը չի տարածվում տվյալ գործի վրա, քանի որ վերապահումը չի վերաբերվում անընդհատ երկարացվող կալանքի ժամկետներին: Դիմումատուն պնդում էր, որ վերապահման նպատակը կայանում էր նրանում, որպեսզի դատախազին իրավունք տրվեր կալանքի ժամկետը երկարացնելու համար պահանջ

ներկայացնել և նման պահանջը բավարարվեր, եթե դրա անհրաժեշտությունը կար:

107. Ղատարանը նշում է, որ վերապահունը ձևակերպված է, որպեսզի Կոնվենցիայի 5(3) հոդվածի շրջանակներից բացառվի վերապահման մեջ նշված Քրեական դատավարության օրենսգրքի դրույթների ժամանակավոր կիրառումը, որոնք վերաբերվում են ձերբակալման ընթացակարգին, քրեական հանցանք կատարած լինելու կասկածի հիման վրա անձանց ձերբակալման կամ կալանքի տակ պահելուն: Այս հոդվածներում նշված են խափանման միջոցներ կիրառելու պայմանները և հիմքերը՝ այդ թվում նաև ձերբակալելու, ինչպես նաև նշվում է այն մարմինների ցանկը, որոնք իրավասու են նշված որոշումներն ընդունելու:

Ղատարանը նշում է, որ վերապահումները վերաբերվում են Քրեական դատավարական օրենսգրքի 97 հոդվածին, ըստ որի անձը կարող է կալանքի տակ գտնվել մինչև 18 ամիս՝ իրավասու դատախազի հրամանով, քրեական հանցանքների քննության ընթացքում:

Չնայած հղում է կատարվում քննության ընթացքում կալանքի ժամկետային սահմանափակմանը, սակայն Ղատարանը գտնում է, որ վերապահունը վերաբերվում է կալանքը որպես խափանման միջոց օգտագործելու ընթացակարգին, մինչդեռ դիմողի գանգատը վերաբերվում է իր անընդհատ երկարացվող կալանքի ժամկետի երկարությանը և ոչ թե դրա օրինականությանը:

108. Ղատարանն այդ պատճառով գտնում է, որ վիճահարույց վերապահունը չի վերաբերվում ներկա գործին:

1.5.2. Գանգատի էության վերաբերյալ

1. Վիճահարույց ժամկետը

109. Անառարկելի է, որ վիճահարույց ժամկետը սկսվել է 1995թ. հունիսի 29-ին, երբ դիմողին դրեցին անընդհատ երկարացվող կալանքի տակ:

Ինչ վերաբերվում է ժամկետի ավարտին, ապա Դիմումատուն հայտնում է, որ այդ օրը 2000թ. մարտի 31-ն է, երբ Մագադանի քաղաքային դատարանը այս գործի վերաբերյալ կայացրեց իր երկրորդ վճիռը: Կառավարությունը պնդում էր, որ ժամկետն ավարտվել է 1999թ. օգոստոսի 3-ին քաղաքային դատարանի առաջին դատավճռի կայացմամբ: Նրանք նաև պաշտպանում էին այն տեսակետը, որ Ղատարանի կողմից Դիմումատուի անժամկետ կալանքի երկարության քննությունը պետք է սահմանափակվի 1998թ. մայիսի 5-ից հետո ընկած ժամանակահատվածով՝ այն օրը, երբ Կոնվենցիան Ռուսաստանում մտավ ուժի մեջ, այսինքն մինչև 1999թ. օգոստոսի 3-ը:

110. Ղատարանը նախ և առաջ հիշեցնում է, որ անժամկետ կալանքի ժամկետի հարցը Կոնվենցիայի 5(3) հոդվածի ներքո որոշելիս՝ քննության ենթակա ժամկետը սկսվում է այն պահից, երբ մեղադրվողը ձերբակալվում է, և վերջանում է այն պահին, երբ մեղադրանքը հաստատվում է՝ նույնիսկ եթե միայն առաջին ատյանի դատարանի կողմից (տես, այլ վճիռների շարքում նաև Վեմհոֆն ընդդեմ Գերմանիայի 1968թ. հունիսի 27-ի վճիռը, շարք Ա, համ. 7, էջ 23, կետ 9, և Լաբիտան ընդդեմ Իտալիայի նշված վերևում, կետ 147): Այսպիսով, տվյալ գործում դիմողի շարունակական կալանքը սկսվեց 1995թ. հունիսի 29-ին, երբ նա

ձերբակալվեց և ավարտվեց 1999թ. օգոստոսի 3-ին, երբ նա դատապարտվեց և ենթարկվեց ազատազրկման Մագադանի քաղաքային դատարանի կողմից: Հետագա կալանքը նույն մեղադրանքներով չփոխեցին այն փաստը, որ սկսած 1999թ. օգոստոսի 3-ից Դիմումատուն իր դատվածությունը կրում էր իրավասու դատարանի կողմից դատապարտվելուց հետո՝ Կոնվենցիայի 5(1)(ա) հոդվածի իմաստի ներքո:

Դիմումատուի շարունակական կալանքի ամբողջ ժամկետը այսպիսով կազմում էր չորս տարի, մեկ ամիս և չորս օր:

111. Քանի որ մինչև 1998թ. մայիսի 5-ն ընկած ժամանակաշրջանը ընկնում է իր *ratione temporis* իրավասությունից դուրս, Դատարանը կարող է միայն հաշվի առնել մեկ տարի, երկու ամիս և քսանինը օր ժամկետը, որն ընկնում էր նշված օրվանից մինչև Մագադանի քաղաքային դատարանի կողմից ընդունված վճռի օրը՝ 1999թ. օգոստոսի 3-ը: Սակայն, պետք է հաշվի առնել այն փաստը, որ մինչև 1998թ. մայիսի 5-ը Դիմումատուն, որ ենթարկվել էր կալանքի 1995թ. հունիսի 29-ին, ազատազրկման տակ էր գտնվում երկու տարի, տաս ամիս և վեց օր (տես, օրինակ, *mutatis mutandis*, Մանսուրն ընդդեմ Թուրքիայի 1995թ. հունիսի 8-ի վճիռը, Շարք Ա, համ. 319-B, էջ 49, կետ 51):

2. Կալանքի ժամկետի «ողջամիտ» լինելը

(ա) Կողմերի փաստարկները

112. Դիմումատուն գտնում էր, որ երկար ժամանակով իրեն ազատազրկելու և կալանքի տակ պահելու անհրաժեշտությունը չկար, քանի որ ոչ մի ապացույց չկար, որ ինքը փորձում էր խանգարել գործի ճշմարտության բացահայտմանը: Կալանքն արդարացնելու վերաբերյալ իշխանությունների կողմից տրված պատճառները պատշաճ և բավարար չէին:

Նա նաև պնդում էր, որ իր գործն առանձնապես բազմածավալ չէր, ինչպես սահմանել էր Մագադանի շրջանային դատարանը 1999թ. մարտի 15-ին: Իր գործի ինը հատորից երեքը կազմում էին իր բողոքները՝ ուղղված տարբեր իշխանություններին: Գործի քննությունը կազմում էր 29 վկաների հարցաքննություն, և գործում կային երկու քաղաքացիական հայցվորներ:

Եվ վերջապես, դիմողը գտնում էր, որ վարույթը անհրաժեշտ ջանասիրությամբ չէր իրականացվել իշխանությունների կողմից: Նրա երկար կալանքն ուղեկցվում էր վատ որակի քննությամբ, որով ապօրինի փորձ էր արվում մեղադրականում շատացնել մեղադրանքները և որի վրա բացակայում էր պատշաճ վերահսկողությունը՝ վերահսկող մարմինների կողմից: Այս իմաստով, նա հղում էր կատարում Մագադանի քաղաքային դատարանի 1999թ. օգոստոսի 3-ի հիմնավորումներին (կետ 80 վերևում):

113. Կառավարությունը նշում է, որ Դիմումատուն ձերբակալվել էր այն հիմքով, որ նա խանգարում էր գործի ճշմարտության բացահայտմանը: Այնուհետ կառավարությունը մինչդատական վարույթում կալանքի ժամկետը համարում է ողջամիտ՝ հաշվի առնելով գործի բազմակողմանի լինելու հանգամանքը, դրա բավականին մեծ ծավալը (9 հատոր) և գործով անցնող վկաների և տուժող կողմի մեծ քանակը:

(բ) *Դատարանի գնահատականը*

(1) *Դատարանի նախադեպով սահմանված սկզբունքները*

114. Դատարանը հիշեցնում է՝ այն հարցը, թե արդյոք կալանքի ժամկետը ողջամիտ է թե ոչ, չի կարելի գնահատել վերացական կերպով: Կալանքի տակ պահելու ողջամտության հարցը պետք է քննվի յուրաքանչյուր գործի փաստերի ներքո՝ հաշվի առնելով գործի առանձնահատկությունները: Շարունակական կալանքը կարող է արդարացված լինել տվյալ գործով, միայն, եթե առկա է հանրային շահի հատուկ արտահայտված պահանջ, որը, չնայած անմեղության կանխավարկածին, գերակշռում է Կոնվենցիանի 5 հոդվածով սահմանված անձնական ազատության նկատմամբ հարգանքի սկզբունքին (տես այլ վճիռների շարքում նաև Կուդլան ընդդեմ Լեհաստանի մեջբերված է վերևում, կետ 110):

Առաջին հերթին ազգային դատական մարմինները պետք է ապահովեն, որպեսզի տվյալ գործում կասկածյալի մինչդատական կալանքի ժամկետը չանցնի ողջամիջ ժամկետներից: Այս իմաստով նրանք պետք է, արժանին մատուցելով անմեղության կանխավարկածին, քննեն վերը նշված հանրային շահի գոյության մասին խոսող բոլոր դեմ և կողմ փաստերը, որը թույլ է տալիս հեռանալ 5-րդ հոդվածի կանոնից, և դրանք պետք է նշվեն իրենց կողմից՝ դիմողին ազատ արձակելու վերաբերյալ ընդունված որոշումներում: Հատկապես այս որոշումներում տրված պատճառաբանությունների, ինչպես նաև դիմողի բողոքներում նշված և փաստաթղթերով լավ հիմնավորված փաստերի հիման վրա Դատարանը կոչված է որոշելու, թե արդյոք տեղի է ունեցել 5(3) հոդվածի խախտում (տես, օրինակ, Լաբիտան ընդդեմ Իտալիայի մեջբերված վերևում, կետ 152):

Հիմնավոր կասկածի վերաբերյալ պնդումներն այն մասին, որ ձերբակալված անձը կատարել է հանցանք, հանդիսանում է շարունակական կալանքի օրինականության *sine qua non* պայման, սակայն մի որոշակի ժամանակամիջոց անցնելուց հետո այն այլևս բավարար չէ: Դատարանը պետք է այնուհետև պարզի, թե արդյոք դատական իշխանությունների կողմից տրված այլ հիմնավորումները շարունակում են արդարացնել ազատագրվումը: Եթե հիմնավորումները «նպատակահարմար են» և «բավարար», ապա Դատարանը պետք է նաև բավարված լինի, որ ազգային մարմինները ցուցաբերել են «առանձնահատուկ ջանասիրություն» վարույթն իրականացնելիս: Այս իմաստով գործի «բազմակողմանիությունը» և հատուկ հատկանշները այնպիսի գործոններ են, որոնք պետք է հաշվի առնել (տես, օրինակ, Սկոտն ընդդեմ Իսպանիայի գործով 1998թ. դեկտեմբերի 18-ի դատավճիռը, 1996-IV Ձեկույցները, էջեր 2399-2400, կետ 74, և I.A-ն ընդդեմ Ֆրանսիայի գործով 1998թ. սեպտեմբերի 23-ի դատավճիռը, Ձեկույցներ 1998-VII, էջ 2978, կետ 102):

(2) *Վերը նշված սկզբունքների կիրառումը տվյալ գործում*

ա). *Կալանավորելու հիմքերը*

115. Դատարանի՝ *ratione temporis* իրավագործության տակ ընկած ժամանակահատվածում, Մագադանի քաղաքային դատարանը դիմողին ազատելը մերժելու համար հիմնվում էր մեղադրանքների ծանրության վրա,

ինչպես նաև, որ առկա էր վտանգ, որ ազատության մեջ գտնվելով՝ դիմողը կարող էր խանգարել ճշմարտության բացահայտմանը (տես կետ 69 վերևում): Դատարանը նկատում է, որ նման հիմնավորումներ տրվել էին նաև Քաղաքային դատարանի կողմից ավելի վաղ՝ 1996թ. դեկտեմբերի 27ին և 1997թ. օգոստոսի 8-ին՝ դիմողի շարունակական կալանքը հիմնավորելու համար (տես կետեր 43 և 46 վերևում):

Դատարանն այնուհետև նշում է, որ 1995թ. հունիսի 29-ն ընդունած՝ դիմողին երկարաժամկետ կալանքի տակ պահելու մասին որոշման հիմնական պատճառաբանությունն այն էր, որ ինքը խափանել էր գործի քննությունը՝ հրաժարվելով ներկայացնել քննության համար անհրաժեշտ որոշ բանկային փաստաթղթեր, որ նա ճնշում էր գործադրել վկաների վրա և ամենայն հավանականությամբ խառնել գործի ապացույցները: Որոշման համար հիմք էին նաև մեղադրանքների ծանրությունը:

116. Դատարանը հիշեցնում է, որ անձին հանցանքի մեջ ներգրավված լինելու վերաբերյալ ծանրակշիռ կասկածի գոյությունը, որը թեև կարևոր գործոն է համարվում, սակայն միայն որպես այդպիսին չի կարող արդարացնող լինել մինչդեռ տական վարույթում երկարաժամկետ կալանքի համար (տես, օրինակ, Սկոտն ընդդեմ Իսպանիայի մեջբերված վերևում, էջ. 2401, կետ 78): Ինչ վերաբերվում է Մագադանի քաղաքային դատարանի կողմից բերված այլ հիմքերին՝ դիմողի կալանքը երկարացնելու վերաբերյալ, մասնավորապես՝ գործի քննությանը խոչընդոտելու մասին, Դատարանը նշում է, որ ի տարբերություն քննիչի՝ 1995թ. հունիսի 29-ի հրամանի, Քաղաքային դատարանը չի նշել իր եզրակացությունը հիմնավորող որևէ փաստացի հանգամանք, որոնք միատեսակ էին 1996, 1997 և 1999 թվականներին: Իր որոշման մեջ դատարանը ոչ մի հղում չի կատարում որևէ գործոնի, որը հնարավորություն կտար ցույց տալու, որ տվյալ ժամանակահատվածի համար դեռ գոյություն ուներ այն վտանգը, որի վրա դատարանը հիմնվում էր:

117. Դատարանն ընդունում է, որ քննությանը միջամտելը, ինչպես նաև հանցանքը կատարելու մեջ դիմողի նկատմամբ կասկածանքը կարող էին սկզբնապես բավարար լինել դիմողի կալանքը թույլատրելու համար: Սակայն, երբ վարույթը սկսեց զարգանալ և ապացույցների հավաքելը ավարտվեց, այդ հիմքը, ի վերջո, ավելի պակաս նպատակահարմար դարձավ:

118. Եզրափակելով՝ Դատարանը գտնում է, որ այն պատճառները, որոնց վրա հիմնվելով՝ իշխանությունները արդարացնում էին դիմողի կալանքը, չնայած սկզբնապես նպատակահարմար և բավարար էին, սակայն որոշ ժամանակ անց կորցրեցին այդ հատկանիշները:

բ) Նախաքննության վարելը

119. Ինչ վերաբերվում է քրեական գործով նախաքննության ժամկետին, ապա Դատարանը հաշվի է առնում ներպետական դատարանների եզրակացություններն այն մասին, որ գործն այդքան էլ բազմաժամկալ չէր և որ գործի քննությունը վատ էր տարվում, որով էլ նպաստում էր վարույթի դանդաղ ընթացքին (տես 69 և 80 կետերը վերևում): Դատարանը ոչ մի պատճառ չի

տեսնում, որպեսզի ուրիշ եզրակացության հանգի: Նա նույնպես գտնում է, որ ըստ ներպետական դատարանների, քննիչները անարդարացիորեն փորձել են շատացնել մեղադրականի հիմքում ընկած մեղադրանքները (տես կետ 80 վերևում) – հանդիմանության ենթակա փաստ, որը հաստատվում է այն հանգամանքով, որ դիմողին առաջադրված ինը մեղադրանքից միայն մեկը հաստատվեց Մագադանի քաղաքային դատարանի 1999թ. օգոստոսի 3-ի դատավճռով:

120. Ինչ վերաբերվում է հետագա դատական վարույթին, ապա Ղատարանը հաշվի է առնում, որ Մագադանի քաղաքային դատարանի վարույթում առկա էին լուրջ հապաղումներ: Ղատը, որը սկսվել էր 1996թ. նոյեմբերի 11-ին, հետաձգվել էր 1997թ. մայիսի 7-ին՝ նախագահող դատավորին աշխատանքից ազատելու կապակցությամբ: Ղատը չէր վերսկսվել մինչև 1999թ. ապրիլի 15-ը, չնայած որոշ ընթացակարգային քայլեր ձեռնարկվել էին 1997թ. հուլիս-օգոստոս ամիսներին (նոր դատավորի նշանակումը և դատալսումների օրը նշանակելը), 1998թ. մայիս և հուլիս ամիսներին (գործը այլ դատարանին փոխանցելը), 1998թ. նոյեմբերին (լսումների համար օր նշանակելը), 1998թ. հունվար և մարտ ամիսներին (քննությունը շարունակելու անհրաժեշտության մասին որոշումները):

Չնայած ճիշտ է, որ 1997թ. օգոստոսի 8-ին նշանակված դատալսումը ստիպված էին տեղափոխել դիմողի պաշտպանի բացակայության պատճառով, և որ դիմումատուն առարկում էր, որպեսզի գործը տեղափոխվեր այլ դատարան, «տեղափոխումը կատարվում էր վարույթը արագացնելու նպատակով» Ղատարանը գտնում է, որ դիմումատուն էապես չի ազդել վարույթի երկար ժամկետների վրա, երկու դատաքննությունների ժամկետների արանքում, երբ գործի մեջ զարգացումներ չկային:

Այսպիսով ակնհայտ է, որ ձգձգված վարույթը չի կարելի վերագրել ո՛չ գործի բազմածավալ լինելուն, ո՛չ էլ դիմողի գործողություններին: Հաշվի առնելով քննության հատկանիշները և դատաքննության վարույթի էական ձգձգումները՝ Ղատարանը գտնում է, որ իշխանությունները չեն գործել պատշաճ արագությամբ:

գ) Եզրակացություն

121. Վերոհիշյալի հիման վրա Ղատարանը գտնում է, որ դիմողի կողմից դատաքննության ընթացքում կալանքի տակ գտնվելու ժամանակահատվածը գերազանցում է «ողջամիջ ժամկետը»: Ուստի, տեղի է ունեցել կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի խախտում:

1.6. Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ն կետի ենթադրյալ խախտման մասին

122. Դիմումատուն զանգատվում է, որ իրեն առաջադրված քրեական մեղադրանքների վերաբերյալ որոշումը չի կայացվել ողջամիտ ժամկետների ընթացքում, ինչպես պահանջվում է կոնվենցիայի 6(1) հոդվածով, որի համապատասխան մասը նշում է հետևյալը.

«յուրաքանչյուր դք...ունի...ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք»:

1.6.1. Վիճահարույց ժամանակահատվածը

123. Դիմողը հայտնել է, որ քննարկման ենթակա ժամանակահատվածը սկսվել է 1995թ. փետրվարի 8-ին՝ իր դեմ քրեական հետապնդում հարուցելով, և ավարտվել է 2000թ. մարտի 31-ին, երբ Մագադանի քաղաքային դատարանը իր երկրորդ վճիռը կայացրեց տվյալ գործով:

Կառավարությունը առարկում էր, որ քննարկման ենթակա ժամանակահատվածը սկսվեց այն պահին, երբ դիմողի գործը փոխանցվեց Մագադանի քաղաքային դատարան՝ 1996թ. փետրվարի 6-ին և ավարտվեց այս դատարանի կողմից առաջին վճիռի հայտարարումով՝ 1999թ. օգոստոսի 3-ին:

124. Դատարանը հիշեցնում է, որ քրեական վարույթի ժամկետի երկարության մասին հարցը որոշվում է՝ հաշվի առնելով այն ժամանակահատվածը, որը սկսվում է այն օրվանից, երբ անձի նկատմամբ առաջադրվում է «մեղադրանք», որտեղ այս տերմինին պետք է տրվի իր ինքնուրույն և անկախ իմաստը (տես այլ որոշումների շարքում Կորիջիլիանոն ընդդեմ Իտալիայի 1982թ. դեկտեմբերի 10 – ի վճիռը, շարք Ա, համ. 57, էջ 13, կետ 34, ինչպես նաև Իմբրիոսկիան ընդդեմ Շվեյցարիայի 1993թ. նոյեմբերի 24-ի վճիռը, շարք Ա, համ. 275, էջ էջ, կետ 36): Այն ավարտվում է այն օրը, երբ մեղադրանքը վերջնականապես որոշվում է կամ վարույթը կարճվում է:

Քննության ենթակա ժամանակահատվածը տվյալ գործում, այսպիսով, սկսվում է 1995թ. փետրվարի 8-ին, երբ դիմողի նկատմամբ կասկած առաջացավ՝ խարդախության վերաբերյալ մեղադրանքով: Ինչ վերաբերվում է ժամանակահատվածի ավարտին, ապա Դատարանը նշում է, որ 1999թ. սեպտեմբերի 29-ին մնացած մեղադրանքների կարճման մասին որոշում ընդունելուց հետո 1999թ. սեպտեմբերի 30-ին դիմողին առաջադրվեց նոր մեղադրանք՝ նույն փաստացի հիմքերով: Դատարանը նկատում է, որ նոր մեղադրանքը սկզբնական համ. 48529 քրեական գործի մասն էր կազմում, որը հարուցվել էր 1995թ. սեպտեմբերի 8-ին: Այս հանգամանքներում, ինչպես նաև, հաշվի առնելով, նոր մեղադրանքի ժամանակացույցը, Դատարանը գտնում է, որ քննության ենթակա ժամանակահատվածը վերջացել է 2000թ. մարտի 31-ին, երբ Քաղաքային դատարանը վճիռ կայացրեց վերջնական մեղադրանքը որոշելու մասին:

Քննության ենթակա ժամանակահատվածը, այսինքն՝ 1995թ. փետրվարի 8-ից մինչև 2000թ. մարտի 31-ը, այսպիսով կազմել է ընդհանուր առմամբ 5 տարի, 1 ամիս և 23 օր, իրականում մեկ վարույթի առնչությամբ, չնայած՝ երկրորդական այլ վարույթների գոյությանը: Չնայած՝ Ռուսաստանի առնչությամբ Դատարանի *ratione temporis* իրավագործությունը տարածվում միայն է Կոնվենցիայի՝ 1998թ. մայիսի 5-ին ուժի մեջ մտնելուց հետո ընկած ժամանակաշրջանի վրա, սակայն Դատարանը կարող է հաշվի առնել վարույթի վիճակը, որը գոյություն ուներ այդ օրը (տես, այլ որոշումների շարքում նաև, *mutates mutandis*, Յաղչին և Սարգինն ընդդեմ Թուրքիայի, 1995թ. հունիսի 8-ի վճիռը, շարք Ա, համ. 319-A, էջ 16, կետ 40):

1.6.2. Վարույթի ժամկետի ողջամիտ լինելը

125. Դատարանը հիշեցնում է, որ քննության ժամկետի ողջամիտ լինելը գնահատվում է գործի հանգամանքների լույսի ներքո, հաշվի առնելով նաև, Դատարանի նախադեպերով հաստատված չափանիշները, մասնավորապես՝ գործի բազմածավալ լինելը, դիմողի վարքագիծը և իրավասու իշխանությունների գործողությունները: Վերջինիս դեպքում պետք է հաշվի առնել դիմողի համար վտանգի աստիճանը (տես այլ որոշումների թվում նաև Կուդլան ընդդեմ Լեհաստանի մեջբերված վերևում, կետ 124):

1. Կողմերի փաստարկները

126. Ինչ վերաբերվում է գործի բազմածավալ լինելուն, ապա Դիմումատուն հղում էր կատարում Մագադանի շրջանային դատարանի 1999թ. մարտի 15-ի որոշման վրա, ըստ որի՝ գործը առանձնապես ծավալուն չէր և որ այդ հանգամանքը չէր կարող ձգձգումների պատճառ հանդիսանալ:

Ինչ վերաբերվում է նրա վարվելակերպին, ապա Դիմումատուն հայտնում էր, որ իր գանգատների նպատակը վարույթն արագացնելն էր: Ավելին, Կոնվենցիայի 6-րդ հոդվածով չի պահաջվում, որպեսզի նա ակտիվ համագործակցեր դատական մարմինների հետ, և ոչ էլ իրավական պաշտպանությունից օգտվելու համար իր կողմից ձեռնարկած փորձերը կարելի է օգտագործել իր դեմ:

Ինչ վերաբերվում է իշխանությունների վարվելակերպին, ապա Դիմումատուն հղում էր կատարում նախաքննության ցածր որակի վրա, ինչպես նաև քննության բացթողումների վրա, որոնք հաստատվել են Մագադանի քաղաքային դատարանի կողմից 1999թ. օգոստոսի 3-ին: Ավելին, հենց Քաղաքային դատարանն է խախտել ներպետական դատավարական իրավունքը՝ դատաքննությունը սկսելու ժամկետային սահմանափակումներ չպահպանելով՝ ինչպես պահանջվում է Քրեական դատավարական օրենսգրքի 223-1 և 239 հոդվածներով: Ընդգծվում էր այն հանգամանքը, որ դատարանը հարցաքննել էր միայն ինը վկաների: Դիմողը նաև նշում էր դատավորին իր գործից հեռացնելու մասին, որը ոչ մի կապ չուներ իր հետ, և գործը Խասինսկի շրջանային դատարանին հանձնելու մասին, որը ցույց տվեց, որ գործի լսելը արագացնելու հարցում անարդյունավետ էր:

127. Կառավարությունը ընդունում էր, որ դիմողի գործի քննությունը եղել է երկարատև, սակայն հայտնում էր, որ այդ ժամկետը ողջամիտ է եղել: Կառավարությունը գտնում էր, որ դիմողի գործի քննության երկարատև ժամկետը պայմանավորված էր գործի ծավալուն լինելու հանգամանքով, ինչպես նաև գործի ամբողջական և բազմակողմանի քննության անհրաժեշտությամբ:

Ավելին, ժամկետների երկար լինելուն նպաստել է նաև դիմողը՝ ներկայացնելով բազմաթիվ դիմումներ, այդ թվում՝ կրկնակի դիմումներ այնպիսի միջնորդությունների վերաբերյալ, որոնք նախկինում մերժվել էին: Այս առումով Կառավարությունը հղում էր կատարում Մագադանի քաղաքային դատարանի 1999թ. հուլիսի 15-ին կատարած պարզաբանումների վրա, որտեղ նշվում էր, որ դատաքննության ժամանակ բազմաթիվ դիմումներ ներկայացնելով՝ դիմողը դիտմամբ նպատակ էր հետապնդում ձգձգել վարույթը: Դիմողի խնդրագրերը, իր

գործը այլ դատարան տեղափոխելու մասին, նույնպես առաջացրին ձգձգումներ: Ընդգծվում էր, որ դիմողի գործի թղթապանակի 30% կազմում էին նրա գանգատները և միջնորդությունները:

Կառավարությունը նույնպես նշում էր, որ դիմողի բանտարկության ժամկետը մարվում էր նրա դատապարտվելու հետևանքով ազատագրվման ժամկետից: Այդ պատճառով դիմողի շարունակական կալանքների ժամկետը չէր կարող որևէ կերպ ազդել նրա դատավճռության ընդհանուր ժամկետի վրա:

Վերջապես, Կառավարությունը հայտարարում էր, որ դիմողի նկատմամբ համընդհանուր ներում կիրառելով՝ իշխանությունները նրա նկատմամբ դրսևորել են մարդասիրական վերաբերմունք, չնայած այն հանգամանքին, որ նա վնասի փոխհատուցում չէր կատարել բանկին և իր շատ հաճախորդներին:

1.6.3. Դատարանի գնահատականը

(ա) Գործի բազմաձևավալ լինելու հանգամանքը

128. Դատարանը նշում է, որ վիճահարույց վարույթը, որտեղ Դիմումատուն միակ մեղադրյալն էր, վերաբերվում էր ծանրակշիռ ապացույցներով հիմնավորված ֆինանսական հանցանքների, որի համար անհրաժեշտություն կար հարցաքննել բազմաթիվ վկաների: Դատարանը ընդգծում է, սակայն, որ 1997թ. մայիսի 7-ից, երբ դատաքննությունը հետաձգվեց, մինչև 1999թ. ապրիլի 15-ը, երբ այն վերսկսվեց, քննության համար ոչ մի միջոցներ չէին կիրառվել:

Դատարանը նկատում է ներպետական դատարանի եզրակացությունը, որ այս գործը այն աստիճան ծավալուն չէր, որպեսզի վարույթի ընթացքում ձգձգումներն արդարացվեին (տես կետ 69 վերևում):

Այսպիսով, ոչ գործի ծավալուն լինելը և ոչ էլ քննության պահանջները պատճառ չէին հանդիսանում վարույթի երկար ժամկետների համար:

(բ) Դիմումատուի վարքագիծը

129. Դատարանը նշում է, որ ներպետական դատարանների քննության ընթացքում դիմողը ներկայացրել է բազմաթիվ դիմումներ՝ իր գործի կապակցությամբ՝ ինչպես դատաքննության ընթացքում, այնպես էլ դրանց միջև ընկած ժամանակամիջոցում: Դատարանը հիշում է, որ 6-րդ հոդվածով չի պահանջվում, որպեսզի քրեական հանցանքի մեջ մեղադրվող անձը ակտիվ համագործակցի դատական մարմինների հետ (տես, օրինակ, Ղոբբերտին ընդդեմ Ֆրանսիայի գործով 1993թ. փետրվարի 25-ի գործով դատավճիռը, շարք Ա, համ. 256-D, էջ 117, կետ 43):

Դատարանը նկատում է, որ գործը քննող դատարանը դատաքննության ընթացքում դիմողի՝ 1999թ. ապրիլի 15-ից ներկայացրած դիմումները, համարել է գործի քննությունը խոչընդոտող: Սակայն, ոչ մի նշում չկա այն մասին, որ դատաքննության այլ փուլերում, օրինակ՝ 1996թ. նոյեմբերի 11-ից մինչև 1997թ. մայիսի 7-ը, կամ 1999թ. դեկտեմբերի 20-ից մինչև 2000թ. մարտի 31-ը դիմողի վարվելակերպը կարելի էր որևէ կերպ համարել հապաղող:

Ինչ վերաբերվում է դատալսումների միջև ընկած ժամանակահատվածում դիմողի կողմից ներկայացրած դիմումներին, ապա Դատարանը նշում է, որ դրանք հիմնականում վերաբերվում էին դատարանի կողմից գործի քննության

երկար ձգձումներին: Ղատարանը չի կարող համարել, որ այդ դիմումները նպաստել են քննության դանդաղելուն՝ հատկապես հաշվի առնելով, որ դրանց մեծ մասը մնաց անարդյունք: Թեև ճիշտ է, որ քննությունը արագացնելու նպատակով, դիմողի գործը փոխանցվել էր այլ դատարանի, սակայն դիմողին չի կարելի քննադատել դրա դեմ առարկելու համար այն բանից հետո, երբ պարզվեց, որ գործի փոխանցումը ոչ մի զարգացման չհանգեցրեց:

Ղատարանը նաև նշում է, որ 1997թ. օգոստոսի 8-ին դատախոսը ստիպված պետք է դադարեցվեր, քանի որ դիմողի փաստաբանը դատարան չէր ներկայացել:

130. Ղատարանը համարում է, որ թեև դիմումատուին կարելի է պատասխանատու համարել որոշ ձգձումների համար, սակայն նրա վարվելակերպը էապես չի նպաստել քննության երկար ժամկետներին:

(գ) Ազգային իշխանությունների վարքագիծը

131. Ինչպես արդեն նշվել է վերևում, ներպետական քննությունները էապես ձգձգվել են, որը չի կարելի բացատրել գործի ծավալուն լինելով կամ դիմողի վարվելակերպով: Մասնավորապես, գործը գործանականում քնած վիճակում է մնացել մոտ երկու տարի շարունակ, այսինքն՝ 1997թ. մայիսի 7-ից մինչև 1999թ. ապրիլի 15-ը:

132. Ղատարանը նկատում է, որ քննության ամբողջ ընթացքում դիմողը գտնվել է բանտարկության մեջ: Մի փաստ, որի վերաբերյալ գործով զբաղվող դատարաններից պահանջվում է առանձին ջանասիրություն՝ արդարադատությունը արագ կերպով իրացնելու նպատակով:

133. Ղատարանն այնուհետև նշում է, որ 1999թ. օգոստոսի 3-ին Մազադանի քաղաքային դատարանի դատավճռից և 1999թ. սեպտեմբերի 29-ին մնացած մեղադրանքները կարճելու որոշումից հետո, իշխանությունները դիմողին առաջադրեցին նոր մեղադրանք՝ նույն փաստացի հիմքերով, այդպիսով էլ՝ ավելի նպաստելով քննության երկար տևողությանը, որն առաջին ատյանի դատարանում արդեն շարունակվում էր, ավելի քան, չորս ու կես տարի:

134. Ղատարանը համարում է, որ ներպետական իրավասու մարմինները հատուկ ջանասիրություն չեն ցուցաբերել, հատկապես Կոնվենցիայի՝ 1998թ. մայիսի 5-ին ուժի մեջ մտնելուց հետո:

1.6.4. Եզրակացություն

135. Հաշվի առնելով վերը նշվածը՝ Ղատարանը համարում է, որ քննության տևողությունը չի համապատասխանում «ողջամիտ ժամկետի» պահանջին: Հետևաբար, տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1 կետի խախտում: